31.10.2021թ.

«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0069,
Դավիթ Անհաղթի 8/4
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
Էլ․ փոստ՝ 444@ucom.am

**Բաժանորդային Պայմանագիր No 4991953**

# Հավելված 1

**Հիմնական համար 60658140**

**V-Office-ում ներառված հետվճարային հեռախոսակապի համարների բաժանորդային պայմանագիր(եր)_____________**

V-Office-ը վիրտուալ մասնավոր հեռախոսակապի ծառայություն է, որի միջոցով իրավաբանական անձանց մատուցվում է ներքին հեռախոսակապի ծառայություն: V-Office Ծառայությունը տալիս է հետևյալ հնարավորությունները (ցանկը կարող է պարբերաբար փոփոխվել).

- Համարների խմբավորում տարբեր ենթախմբերում,
- Կարճ համարների հատկացում գրանցված համարներին,
- Ձայնային մենյուի վերբեռնում և կցում հիմնական համարին,
- Մուտքային և ելքային միաժամանակյա զանգերի աջակցում, բազմաթիվ կապուղիներով կապի ապահովում,
- Օպերատորների խմբի ստեղծում, որը թույլ է տալիս սահմանել զանգերի վերահասցեագրման հատուկ կանոններ ենթախմբերում ընդգրկված տարբեր համարների համար,
- Զանգերի ձայնագրում և հեռակա լսում, որը թույլ է տալիս օրը 24 ժամ և շաբաթը 7 օր ձայնագրել անհատական համարներին/համարներից ստացվող/կատարվող զանգերը (հասանելի է վեբ ինտերֆեյսի միջոցով. ձայնագրությունները պահպանվում են 12 (տասներկու) ամիս),
- Զանգի ավտոմատ փոխանցում, եթե չկա պատասխան, համարը զբաղված է կամ ըստ սահմանված կանոնների,
- Զանգերի պատմություն (հասանելի է վեբ ինտերֆեյսի միջոցով),
- Զանգերի ոչ ավտոմատ փոխանցում հատուկ հրահանգի միջոցով,
- Վեբ ինտերֆեյս, որը կարող է օգտագործվել Ծառայության կարգավորումները, կոնֆիգուրացիաները սահմանելու և դրանցում փոփոխություններ կատարելու և կատարված զանգերի վիճակագրությունն ստանալու համար:

## Վճարումներ

V-Office ծառայությունն (այսուհետ՝ նաև Ծառայություն) ակտիվանում է Բաժանորդային Պայմանագիրը ստորագրելու պահից: Յուրաքանչյուր ամիս Բաժանորդին ներկայացվելու է հաշիվ նախորդ ամսվա բացասական հաշվեկշռի, եթե առկա է, և ամսավճարի համար: Վճարումները պետք է կատարվեն մինչև հաշվում սահմանված ժամկետը: Վճարումների ուշացման դեպքում Ծառայությունը սահմանափակվում է (կասեցվում են ելքային ծառայությունները) մինչև հաջորդ ամսվա ավարտը: Սահմանափակման ժամանակահատվածի համար ամսավճարը ենթակա է գանձման: Այդ ժամանակահատվածում պարտքը չմարելու դեպքում Ծառայությունն ամբողջությամբ կասեցվում է: Կասեցման ժամանակահատվածի համար ամսավճար չի գանձվում: Ամսավճարը ներառում է.

1. հիմնական համարի համար սահմանված ամսավճարը և
2. գումար, որը հաշվարկվում է Ծառայությունից օգտվող համարների քանակի և հետևյալ աղյուսակով սահմանված բաղադրիչների հիման վրա և
3. V-Office ծառայության աջակցման ամսավճար, եթե կիրառելի է:

Հիմնական համարի համար ամսավճարը և հիմնական համարի միջոցով կատարվող զանգերի սակագները որոշվում են՝ ըստ հիմնական համարի համար ընտրված սակագնային պլանի:

| Բաղադրիչի նկարագիրը | Ամսավճար, ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |
|---|---|
| 1 ձայնային մենյու (ՁՄ) | 3000 |
| V-Office-ում ներառված յուրաքանչյուր համարի համար | 250 |
| Ընդհանուր օգտագործման մուտքային և ելքային գիծ (յուրաքանչյուր գծի համար) | 2000 |

**Բաժանորդի/Լիազորված անձի ստորագրություն**

**Յուքոմ ՓԲԸ**
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝
Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝
Ամսաթիվ 05/09/2023

Հովհաննես Սաֆարյան .

«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0069,
Դավիթ Անհաղթի 8/4
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
Էլ․ փոստ՝ 444@ucom.am

| | |
|---|---|
| Կարճ ենթահամարներ/Խմբեր (յուրաքանչյուր համարի համար) | 1000 |
| Զանգերի ձայնագրություն (յուրաքանչյուր համարի համար) | 3000 |

* Ձայնագրված ՁՄ-ը պետք է տրամադրվի Բաժանորդի կողմից՝ MP3 ձևաչափով, առավելագույնը 5 ՄԲ:

**Հիմնական համարի սակագնային պլան**

| | ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |
|---|---|
| Հիմնական համարի ամսավճար | 900 |
| Զանգեր ՀՀ և ԼՂ ֆիքսված ցանցեր | 5 դրամ/րոպե/AMD/min |
| Զանգեր Ucom բջջային ցանց | 18 դրամ/րոպե/AMD/min |
| Զանգեր ՀՀ և ԼՂ այլ բջջային ցանցեր | 18 դրամ/րոպե/AMD/min |
| Միջազգային զանգեր | Ըստ Ucom միջազգային զանգերի սակագների |

**Գումարային սահմանաչափ/ Credit limit:** -200000ՀՀԴ/ AMD

Ուշադրություն. V-Office-ում ներառված յուրաքանչյուր համարի համար հիմնական համարի միջոցով («19» կոդով) կատարվող զանգերի կարգավորումները և սահմանափակումները կատարվում են Բաժանորդի կողմից՝ վեբ ինտերֆեյսի միջոցով: Հետվճարային հեռախոսակապի ծառայությունների բաժանորդային պայմանագրով յուրաքանչյուր համարի համար սահմանված կորպորատիվ ծառայությունների փաթեթով կարգավորվում են միայն հիմնական համարի միջոցով չկատարվող զանգերի և այլ ծառայությունների կարգավորումները և սահմանափակումները:
Վերոնշյալ գումարային սահմանաչափը նախատեսված է միայն հիմնական համարի միջոցով կատարվող զանգերի համար, իսկ հիմնական համարի միջոցով չկատարվող զանգերի և այլ ծառայությունների համար նախատեսված գումարային սահմանաչափը սահմանվում է հետվճարային հեռախոսակապի ծառայությունների բաժանորդային պայմանագրով:
Հիմնական համարի համար սահմանված գումարային սահմանաչափը կրում է միայն տեղեկատվական բնույթ, ըստ որի՝ Բաժանորդը տեղեկացվում է, որ հասել է գումարային սահմանաչափին, սակայն կարող է շարունակել օգտվել Ucom ծառայություններից: Բաժանորդը պատասխանատու է V-Office Ծառայության դիմաց կուտակված ամբողջ պարտքի համար՝ անկախ այն հանգամանքից, թե պարտքը կուտակվել է գումարային սահմանաչափի սահմաններում, թե դրա գերազանցմամբ:
Attention – The settings and restrictions for calls which are made through the main number (with the prefix "19") are controlled by the Subscriber through the web interface for each number included in V-Office. The corporate service set chosen for each number by the subscription agreement for postpaid telephony services regulates only those calls and other services which are not made through the main number.
The credit limit specified above is set only for calls which are made through the main number; the credit limit for calls and other services which are not made through the main number is set by the subscription agreement for postpaid telephony services. The credit limit set for the main number is for informational purposes only. This means that the Subscriber will be informed about having reached the credit limit, but can continue using Ucom services. The Subscriber is responsible for all debt accumulated for V-Office Services, regardless of whether the debt was accumulated within the limits of or by exceeding the credit limit.

**Սույն Բաժանորդային Պայմանագրի կնքմամբ Բաժանորդի և Յուքոմի միջև նախկինում կնքված «Հետվճարային շարժական հեռախոսակապի ծառայություններին բաժանորդագրվելու դիմումի» վերնագիրը փոխվում է և սահմանվում «Հետվճարային հեռախոսակապի ծառայություններին բաժանորդագրվելու դիմում»:**

**Բաժանորդի/Լիազորված անձի ստորագրություն**

**Յուքոմ ՓԲԸ**
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝
Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝
Ամսաթիվ 05/09/2023

Հովհաննես Սաֆարյան

«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0069,
Դավիթ Անհաղթի 8/4
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
Էլ․ փոստ՝ 444@ucom.am

**Բաժանորդային Պայմանագիր No 4991953**

## Դիմում
## V-Office ծառայությանը բաժանորդագրվելու

☐ **Ֆիզիկական անձ** ☑ **Իրավաբանական անձ**
☑ **Իրավաբանական անձ** ☐ **Անհատ ձեռնարկատեր**

Կազմակերպության անվանում /Company Name: ՀՀ Էկոնոմիկայի Նախարարություն
Կազմակերպաիրավական ձևը/Juridical form:
Պետ. գրանցման տվյալներ/ State Registration Data: 286.184.1077541
ՀՎՀՀ /Tax code: 02698604
Հեռ. / Phone.:
Հասցե/Address: Միեր Մկրտչյան 5 շենք, Երևան, ՀՀ

**Ընկերության Տնօրեն / Company Director**
Անուն,ազգանուն/Name, surname: Կարեն Սարգսյան
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/ ID details: 012790762 13/02/2020 004
Հեռ. / Phone.:

**Ընկերության լիազորված անձ /Company Representative**
Անուն,ազգանուն/Name, surname: Կարեն Սարգսյան
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/ ID details: 012790762 13/02/2020 004

**Ծառայության տեսակը**

**Սակագնային պլան(փաթեթ)**
For V-Office

Սույն դիմումը, Յուքոմ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Յուքոմ) պաշտոնական կայքում (www.ucom.am) հրապարակված «Էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ»-ի, Առաջարկի Նկարագրի, Ծառայության տրամադրման պայմանների, Ծառայության Գնացուցակի, ինչպես նաև յուրաքանչյուր ծառայությունից օգտվելու վերաբերյալ՝ Յուքոմի կողմից սահմանված կիրառելի կանոնների ու կարգերի հետ հանդիսանում են Ձեր և Յուքոմի միջև կնքված պարտադիր ուժ ունեցող Բաժանորդային Պայմանագիր: Ստորագրելով սույն դիմումը՝ Բաժանորդը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է Բաժանորդային Պայմանագրին, որին լիովին համաձայն է և տալիս է համաձայնություն իր կողմից Յուքոմի նկատմամբ ստանձնած պարտավորությունների և դրանց կատարման մասին տեղեկությունները, այդ թվում՝ վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների մասին տեղեկություններ, տրամադրելու ՀՀ-ում գործող վարկային բյուրոներին՝ օրենքով սահմանված նպատակով օգտագործման համար:

*Բաժանորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը կցված է սույն դիմումին՝ որպես Հավելված (այսուհետ՝ ԱՀՓ հավելված): Սույն դիմումում և ԱՀՓ հավելվածում պարունակվող տվյալների միջև տարբերության դեպքում գերակայում է ԱՀՓ հավելվածը, որի հիման վրա Յուքոմն իրավասու է փոփոխել սույն դիմումում պարունակվող Բաժանորդի տվյալները:

**Բաժանորդի/Լիազորված անձի ստորագրություն**

**Յուքոմ ՓԲԸ**
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝
Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝
Ամսաթիվ 05/09/2023

Hovhannes Safaryan .